




ԲՆՕՐԻՆԱԿ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«Հավատարմագրման ազգային մարմին»



ՊՈԱԿ-ի տնօրեն

Ն. Մկրտչյան
(անուն, ազգանուն)

« 28 » 10 2015 թ.

N 7-4 հրաման

**Հինք՝ Հավատարմագրման ազգային
մարմնի հավատարմագրման խորհրդի
2015 թվականի հոկտեմբերի 28-ի
N 2 որոշումը**

Կ Ա Ր Գ

**ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
K-02**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգի նպատակը հավատարմագրման տեխնիկական կոմիտեների (այսուհետ՝ Կոմիտեներ) գործունեության կարգի սահմանումն է:
2. Կոմիտեների անդամներն ստորագրում են անկողմնակալության և գաղտնիության վերաբերյալ հայտարարագիր:
3. Կոմիտեների աշխատանքներն իրականացվում են հասարակական հիմունքներով:
4. Կոմիտեների գործառույթները կարգավորվում են «Հավատարմագրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կարգով:

II. ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

5. Կոմիտեի աշխատանքները կազմակերպվում են նիստերի միջոցով:
6. Յուրաքանչյուր կոմիտե բաղկացած է երեք անդամից՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության Գլխավոր քարտուղար, տվյալ հավատարմագրման ոլորտի պետական գերատեսչության ներկայացուցիչ և «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի տնօրեն: «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ը նիստերին հրավիրում է նաև հավատարմագրման փորձագետների (գնահատողների) ու տեխնիկական փորձագետների ռեեստրից ընտրված 2 փորձագետ, որոնք չեն մասնակցել տվյալ համապատասխանության գնահատման մարմնի գնահատման աշխատանքներին: Հավատարմագրման փորձագետների (գնահատողների) ու տեխնիկական փորձագետների ռեեստրում տվյալ ոլորտի փորձագետի (գնահատողի) և (կամ) տեխնիկական փորձագետի բացակայության դեպքում, կարող են հրավիրվել համապատասխան ոլորտի անկախ այլ մասնագետներ:
7. Կոմիտեի նախագահ է հանդիսանում ՀՀ էկոնոմիկայի նախարարության Գլխավոր քարտուղարը, իսկ Կոմիտեի քարտուղար՝ ՀԱՄ-ի տնօրենը:

8. ՀԱՄ-ը գնահատման (լրացուցիչ գնահատման) հաշվետվությունն ստանալուն հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում կոմիտեի անդամներին է տրամադրում նիստի օրակարգը կից փաստաթղթերով:

9. Կոմիտեի նիստն իրավազոր է, եթե ներկա են քվեարկության իրավունք ունեցող Կոմիտեի անդամներից առնվազն երկուսը:

10. Կոմիտեի նիստերի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Նիստին ներկա անդամների ձայների հավասարության դեպքում Կոմիտեի նախագահի ձայնը վճռորոշ է:

11. Կոմիտեի նիստերը վարում է Կոմիտեի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ Կոմիտեի նախագահի հանձնարարությամբ, Կոմիտեի մեկ այլ անդամ:

12. Կոմիտեի քարտուղարը վարում է Խորհրդի նիստի արձանագրությունը և դրա հիման վրա կազմում Կոմիտեի որոշումների նախագծերը:

13. Կոմիտեն, ուսումնասիրելով ներկայացված փաստաթղթերը, կայացնում է որոշում ՀԳՄ-ի՝

- հավատարմագրման,
- հավատարմագրումը ընդլայնելու կամ կրճատելու,
- հավատարմագրումն ուժի մեջ թողնելու,
- հավատարմագրումը կասեցնելու կամ դադարեցնելու,
- հավատարմագրումը մերժելու վերաբերյալ:

14. Կոմիտեի արձանագրությունը ստորագրվում է Կոմիտեի բոլոր անդամների կողմից, իսկ որոշումը՝ Կոմիտեի նախագահի և քարտուղարի կողմից:

15. ՀԳՄ-ն հավատարմագրելու կամ հավատարմագրումը մերժելու, հավատարմագրումը ընդլայնելու կամ կրճատելու, հավատարմագրումն ուժի մեջ թողնելու, ինչպես նաև կասեցնելու կամ դադարեցնելու վերաբերյալ տարակարծությունների դեպքում Կոմիտեի տվյալ անդամը արձանագրությանը կից

գրավոր ներկայացնում է իր անհատական կարծիքը՝ կատարելով համապատասխան նշում արձանագրության մեջ:



16. Հավատարմագրման մասին դրական որոշման ընդունման դեպքում ՀԱՄ-ը 7 աշխատանքային օրվա ընթացքում՝

1) ներառում է ՀԳՄ-ին հավատարմագրված ՀԳՄ-ների համապատասխան ռեեստրում և կնքում հավատարմագրման պայմանագիր.

2) ՀԳՄ-ին տրամադրում է հավատարմագրման վկայագիր:

17. Անհրաժեշտության (հրատապ հարցերի) դեպքում Կոմիտեի որոշումները կարող են ընդունվել հարցման կարգով՝ Կոմիտեի անդամների կողմից գրավոր ներկայացված քվեներին համապատասխան:

ՓԱՍՏԱԹՂԹԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Խմբագրությունը		Փոփոխությունը		Փոփոխված կետերը/բառերը	Փոփոխված (նախորդ) տարբերակը	Փոփոխությունը կատարողի ստորագրությունը
Հ/Հ	Հաստատման ամսաթիվը	Հ/Հ	Հաստատման ամսաթիվը			
1	28.10.2015թ.	1	26.06.2017թ.	6-րդ, 7-րդ կետեր՝ «գլխավոր խորհրդական»	«տեղակալ»	
1	28.10.2015թ.	2	13.08.2018թ.	6-րդ, 7-րդ կետեր՝ «տեղակալ»	«գլխավոր խորհրդական»	
1	28.10.2015թ.	3	10.06.2019թ.	6-րդ, 7-րդ կետեր՝ «ՀՀ էկոնոմիկայի նախարարության Գլխավոր քարտուղար»	«հավատարմագրման ոլորտը համակարգող ՀՀ տնտեսական և զարգացման ներդրումների նախարարի տեղակալը»	